DOI: 10.59560/18291155-2025.2-231

ԻԳՆԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական, իրավագիտության մագիստրոս

ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԻՀԻԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ամփոփագիր

Աշխատանքում ներկայացվում է «իրավական մշակույթ» և «իրավագիտակցություն» հասկացությունների՝ ժամանակակից հասարակության շրջանակներում առկա ընկալումները: Ուսումնասիրության արդիականությունը կայանում է նրանում, որ իրավագիտակցության սահմանումը որպես սուբյեկտիվ գործոն, որը որոշում է պետական-իրավական ոլորտում անհատների գործողությունները, հիմք է տալիս հասկանալու այդ սոցիալական հարաբերությունների բնույթը, ինչը հանգեցնում է ուսումնասիրվող թեմայի նկատմամբ շարունակական հետաքրքրության: Հոդվածում քննարկվում են իրավագիտակցության էությունը հասկանալու խնդիրները և քաղաքացիների իրավական մշակույթը՝ պետության և իրավունքի տեսության ոլորտում տարբեր իրավաբան գիտնականների կողմից արտահայտած կարծիքների համատեքստում: Բացի դրանից, հեղինակը վերլուծում է քաղաքացիների մոտ իրավական նիհիլիզմի առաջացմանը նպաստող հիմնական պատճառներն ու պայմանները: Ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է եզրակացություն, որ անհատի իրավական գիտակցությունը և հասարակության իրավական մշակույթը, որպես ամբողջություն, էական ազդեցություն են ունենում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման վրա: Այս առումով պետության առջև խնդիր է դրված հնարավոր բոլոր միջոցներով նպաստելու իրավագիտակցության մակարդակի փուլային բարձրացմանը՝ իրավունքի

կազմակերպված գիտելիքների ներդրման, ինչպես նաև բնակչության ընդհանուր իրավական մշակույթի բարձրացման միջոցով: Կարծում ենք՝ նշված նպատակի իրագործման ճանապարհին առկա են որոշակի խնդիրներ և սույն աշխատանքում քննարկվում և ներկայացվում է այդ խաչընդոտները հաղթահարելուն ուղղված առաջարկների բովանդակային ասպեկտը:

Հիմնաբառեր. իրավական մշակույթ, իրավագիտակցություն, իրավական ժխտողականություն (նիհիլիզմ), իրավական արժեքաբանություն, իրավական դաստիարակություն, հասարակական գիտակցություն:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Նշված հոդվածը համարվում է Սահմանադրության հիմքը և ժողովրդավարական, իրավական պետության կառուցմանը խոչընդոտող հանգամանքների հաղթահարման համար անհրաժեշտ է պետական իշխանության, բնակչության և քաղաքացիական հասարակության միասնական աշխատանքը այդ նպատակի իրագործման համար: Նշված ճանապարհին յուրաքանչյուր ժողովրդավարական պետության կողմից մշակվում է քաղաքականություն, որի առանցքային նպատակը երկրի բնակչության, հասարակության անդամների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նշված մարմինների պաշտոնատար անձանց մոտ իրավագիտակցության մակարդակի աստիճանական բարձրացումն է, վերջիններիս մոտ իրավակարգի, իրավական մշակույթի և մնացյալ իրավական արժեքների նկատմամբ հետաքրքրության առաջացումը: Հարկ է նշել, որ այս նպատակի իրագործման ճանապարհին և դրան զուգահեռ իրագործվում է մեկ այլ՝ իր նպատակային նշանակությամբ բավականին կարևոր (արժեքային) նպատակ, այն է՝ իրավական նիհիլիզմի (իրավական ժխտողականության, մերժողականության) հաղթահարումը[1]:

Իրավական ժխտողականությունը, միջազգային եզրույթով՝ իրավական նիհիլիզմը (լատ.՝ Nihil՝ ոչինչ, ոչնչություն), օրենքի՝ որպես սոցիալական հարաբերությունների կարգավորչի մերժումն է, որը գործնականում հանգեցնում է ապօրինության (անօրինականության), քաոսի, և, ընդհանուր առմամբ, արգելակում է իրավական համակարգի զարգացումը: Իրավական

[1] Տե՛ս **Алексеев С.** Общая теория права. В 2 т., Т. 1. - М.: Юрид. лит., 1981. - С. 81:

ժխտողականության տարբեր դրսևորումներ կարող են էական վնաս հասցնել նաև պետությանը՝ ստեղծելով անկայունություն: Այս երևույթի և դրանից ածանցյալ գաղափարների կրողները չեն հավատում օրենքների արդարությանը և հասարակական առաքելությանը՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը որևէ կերպ չկապելով պետական և քաղաքական ինստիտուտների գործառույթների իրականացմամբ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ:

Անհրաժեշտ է նշել, որ իրավական նիհիլիզմի (ժխտողականության) հաղթահարման համար անհրաժեշտ առաջնային նախադրյալներից է ազգաբնակչության իրավագիտակցության զարգացման անհրաժեշտությունը: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ պետության իրավական համակարգի զարգացման և գործնականում դրա կիրառման հետ կապված խնդիրներից խուսափելու հարցում էական նշանակություն ունի վերը նշված հանգամանքը, քանի որ եթե ազգաբնակչության կողմից գնահատվում է պետության իրավական համակարգի գործառույթների արդյունավետ իրականացումը, ապա բնակչության կողմից նախապատվությունը կտրվի իրավական կարգավորումների միջոցով ցանկացած հակահիրավական երևույթի հաղթահարմանը և առավել քիչ կլինեն այն դեպքերը, երբ նշված խնդիրների լուծումն իրականացվում է միջանձնային հարթակում:

Ներկայումս այս խնդիրն առավել օրհասական է: Նախ՝ երկիրը գտնվում է սահմանադրահիրավական և քաղաքական լուրջ բարեփոխումների փուլում, որն ինքնին բարդ գործընթաց է և ուղեկցվում է առկա համակարգի ամբողջական վերակառուցմամբ:

Բացի այդ ժամանակակից աշխարհում, երբ իրավունքը հասարակական գրեթե բոլոր հարաբերությունների վրա թողնում է այս կամ այն չափով որոշակի ազդեցություն, **(խոսքը իրավունքի կարգավորիչ դերի մասին է)** իրավական նիհիլիզմի յուրաքանչյուր դրսևորում դառնում է խոչընդոտ տվյալ հասարակության զարգացման համար: Իսկ եթե հաշվի առնենք, որ գլոբալիզացիայի պայմաններում աստիճանաբար վերանում են պետությունների միջև առկա սահմաններն իրենց նախկին իմաստով, ապա կոնկրետ հասարակությունում առկա իրավական նիհիլիզմի մասսայական դրսևորումներն իրենց ազդեցությունն են թողնում նաև մյուս պետությունների վրա և խոչընդոտում տարատեսակ ինտեգրումների գործընթացներին, որն էլ հանգեցնում է համաշխարհային տարատեսակ խնդիրների լուծմանն ուղղված քայլերի ձախողմանը: Ուստի ժամանակակից աշխարհում իրավական

նիհիլիզմի հաղթահարումը պետք է դառնա պետությունների առաջնահերթ խնդիրներից մեկը:

Նկարագրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է, որ իրավունքը հասարակական բոլոր օղակներում ընկալվի որպես սոցիալական կարգավորիչ: Ինչպես նշում էր Ի. Կանտը՝ «Իրավունքը քաղաքացիական հասարակության կարևորագույն գործիքն է, որը կոչված է պաշտպանելու քաղաքացուն ամենաթողությունից և ապահովելու դրա համար ազատությունների սահման»: Իսկ վերջինս կախված է իրավագիտակցության և հասարակության իրավական մշակույթի պահանջվածության մակարդակից: Այս երևույթների հակապատկերը, որպես այդպիսին, հանդիսանում է իրավական նիհիլիզմը:

Այս համատեքստում պետք է նաև խոսել իրավագիտակցության մասին, ինչը մեր խորին համոզմամբ հասարակական կյանքում ունի բավականին ծանրակշիռ դեր և որ ամենակարևորն է՝ իրավական ժխտողականության հաղթահարման հարցում ունի ելակետային նշանակություն[1]:

Յուրաքանչյուր մարդ որոշակի իրավագիտակցության կրող է, կարևոր չէ՝ բարձր, թե՝ ցածր, զարգացած, թե՝ ոչ, ճիշտ, թե՝ աղավաղված: Գլխավորն այն է, որ նա ունի սեփական կարծիք իրավունքի մասին: Մարդը գնահատում է ոչ միայն իրավունքը, օրենքները, այլև մյուս իրավաբանական արժեքները՝ օրինականությունը, իրավակարգը, իրավաստեղծ գործունեությունը, արդարադատությունը, իրավական բարեփոխումների ընթացքը, հանցավորության վիճակը, իրավապահ մարմինների գործունեությունը և այլն, այլ կերպ ասած՝ այն ամենը, ինչը տեղի է ունենում իրավական ոլորտում:

Ի.Ա. Իլյինն «Իրավագիտակցության էության մասին» աշխատանքում գրել է. «Չկա առանց իրավագիտակցության մարդ, այսինքն՝ կա՛մ քամահրական, անուշադրության մատնված, անհեթեթ կա՛մ նույնիսկ վայրենացած իրավագիտակցությամբ մարդիկ: Սակայն նույն թույլ, քծնող, հանցավոր իրավագիտակցությունը մնում է իրավագիտակցություն, թեև դրա հոգեկան-հոգևոր կառուցվածքը սխալ է և միանշանակ անընդունելի պետության կողմից, իսկ բովանդակությունը և դրդապատճառները՝ կեղծ և հիմարավուն»[2]:

Իրավագիտակցության աստիճանի որոշման գործնական նշանակությունը այն է, որ կարող է ազդել երկրում իրականացվող իրավական

[1] Տե՛ս **Щегорцев В.** Социология правосознания. - М.: Мысль, 1981. - С. 28:
[2] Տե՛ս **Ильин И.А** Собрание сочинений. Том I. - М., 1993. - С. 224:

բարեփոխումների բովանդակության, իրավակիրառ գործունեության ոլորտի իրավաչափության գնահատման վրա: ՀՀ Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական բարեփոխումների ոլորտում իրավագիտակցության գործնական նշանակությանը: ՀՀ Սահմանադրական դատարանը 28.06.1999 թ. ՍԴՈ-167 որոշմամբ արձանագրել է, որ ընտրությունների պատշաճ կազմակերպման և անցկացման վրա բացասաբար են անդրադարձել, ի թիվս այլոց, ոչ բավարար աշխատանքը բնակչության իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ: Մեկ այլ դեպքում, ՀՀ Սահմանադրական դատարանը, 09.04.2007 թ. ՍԴՈ-690 որոշմամբ քննարկելով ՀՀ Վճռաբեկ դատարանի կարգավիճակի ոլորտում իրականացված բարեփոխումների առանձին դրույթների սահմանադրականության հարցերը, նշել է, որ համակարգային բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև անցումային համակարգերին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են իրավագիտակցության դեռևս ցածր մակարդակը, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անբավարար աստիճանը, համակարգային անկատարությունները, կոռուպցիոն ռիսկերը և այլն:

Այս համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ է իրենից ներկայացնում իրավագիտակցությունը:

Ամենաընդհանուր բնորոշմամբ իրավագիտակցությունն անհատների ու խմբերի գիտելիքների, պատկերացումների, հույզերի, հայացքների և գնահատականների ամբողջությունն է, որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը գործող և ցանկալի իրավունքի, դրա կիրառման և արտահայտման ձևերի առնչությամբ[1]:

Վերոգրյալից ելնելով՝ կարող ենք առանձնացնել իրավագիտակցության հատկանիշները.

1.Իրավագիտակցությունը գաղափարահոգեբանական այն միջավայրն է, որտեղից մարդիկ քաղում են իրավունքի մասին իրենց պատկերացումներնը, և այն գործիքը, որի օգնությամբ նրանք որոշում և գնահատում են իրենց վերաբերմունքն իրավական իրողությանը:

2. Իրավագիտակցությունը հասարակական գիտակցության առանձնահատուկ ձև է, որը, ի տարբերություն հասարակական գիտակցության այլ

[1] Տե՛ս **Остроумов Г.** Правовое осознание действительности. - М.: Наука, 1969. - С. 43:

ձևերի՝ բարոյական, քաղաքական և այլն, հայացքների և պատկերացումների առավել հստակ և որոշակի համակարգ է:

3. Իրավագիտակցությունն արտացոլում է ոչ միայն հասարակական հարաբերությունների առկա վիճակը, այլև դրանց զարգացման միտումները:

4. Իրավագիտակցությունն արտահայտվում է մարդկանց իրավաբանորեն նշանակալի վարքագծում (իրավաչափ կամ ոչ իրավաչափ):

Իրավագիտակցությունը՝ որպես հասարակության իրավական կյանքի բարդ երևույթ, ունի տարողունակ ներքին կառուցվածք, որը ներառում է իրավական գաղափարախոսությունը և իրավական հոգեբանությունը:

Խոսելով իրավագիտակցության բովանդակության և հասարակական կյանքում ունեցած նշանակության մասին՝ անհրաժեշտ ենք համարում նաև անդրադառնալ իրավական ժխտողականության դեմ պայքարի գործում կարևոր նշանակություն ունեցող իրավական մշակույթի դերին[1]:

Փիլիսոփայական-սոցիոլոգիական գրականության մեջ հազիվ թե գտնվի այնպիսի եզրույթ, որն ունենա այդքան մեծ քանակությամբ մեկնաբանություններ, ինչպես «մշակույթ» եզրույթը[2]: Ասվածը վերաբերում է նաև մշակույթի վերաբերյալ բնորոշումների բազմազանությանը:

Իրավական մշակույթը պատմականորեն ձևավորված, հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր զարգացման մակարդակով պայմանավորված մշակույթի տարատեսակ է, որն արտացոլում է իրավական կյանքի որակը և արտահայտվում է իրավական գործունեության, իրավագիտակցության և իրավական զարգացման ձեռք բերված մակարդակով, ինչպես նաև պետության կողմից մարդու իրավունքների և պարտականությունների երաշխավորվածության աստիճանով:

Իրավական մշակույթը համամարդկային մշակույթի մի մասն է, որը ստեղծվել է աստիճանական, հաջորդական հասարակական զարգացման արդյունքում, միմյանց հաջորդող սերունդների համակցված ջանքերով: Իրավական մշակույթը գործում է այլ բնագավառների և ոլորտների հետ օրգանական փոխգործակցությամբ՝ տնտեսագիտական, քաղաքական, բարոյական, կրոնական և այլն, իր վրա կրում է դրանց հակադարձ ազդեցությունը:

[1] Տե՛ս **Рослов С.** Роль правосознания в формировании гражданского общества в России: диссертация на соискание ученой степени кандидата социологических наук. - Сар., 2005. - С. 47:

[2] Տե՛ս **Малахов В.А.** Культура и человеческая целостность. - Киев, 1984. – С. 7:

Իրավական մշակույթը, հանդիսանալով հասարակական մշակույթի տարատեսակ, արտահայտվում է հասարակության իրավական համակարգի իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության, իրավագիտակցության և իրավական զարգացման ձեռք բերված մակարդակով: Նշենք, որ իրավական մշակույթն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հասարակության իրավական համակարգում: Այն գտնվում է իրավունքի, իրավաբանական պրակտիկայի, իրավագիտակցության և, ընդհանուր առմամբ, իրավական համակարգի հիմքում և ներկայացնում է իրավական համակարգի որակական վիճակը:

Երբեմն իրավական մշակույթը նույնացվում է իրավագիտակցության հետ: Անժխտելի է, որ այս երկու երևույթների միջև եղած օրգանական կապը բավականին սերտ է, սակայն իրավական մշակույթ հասկացությունն ավելի ընդգրկուն է. իրավագիտակցությունն իրավական մշակույթի տարրերից է: Պետության իրավական համակարգի և դրան զուգահեռ նաև ազգաբնակչության իրավագիտակցության աստիճանի զարգացման հարցում կարևոր նշանակություն ունեն նաև հասարակության իրավական մշակույթի կառուցվածքային տարրերը՝ իրավունքի և իրավական հաստատությունների զարգացման բնույթը, աստիճանը, օրինականության և իրավակարգի վիճակը, իրավագիտակցության զարգացման և իրավաչափ վարքագծի կայունության աստիճանը: Հասարակության իրավական մշակույթը, առաջին հերթին, կախված է հասարակության իրավագիտակցության զարգացման մակարդակից, այսինքն՝ որքանով է իրավական առումով տեղեկացված բնակչությունը, ինչպիսի հուզական վերաբերմունք ունի բնակչությունը գործող օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի առնչությամբ և այլն: Հասարակության իրավական մշակույթն էականորեն կախված է նաև իրավական գործունեության աստիճանից, որը ներառում է իրավաստեղծ և իրավակիրառ գործունեությունը: Հետևաբար, որքան բարձր է իրավաստեղծ գործունեության որակը կամ որքան արդյունավետ է իրականացվում իրավակիրառ գործունեությունը, այնքան բարձր է տվյալ հասարակության իրավական մշակույթը[1]:

Առանձին սոցիալական խմբերի իրավական մշակույթը բնորոշվում է տվյալ սոցիալական խմբի իրավագիտակցության, օրենսդրության պատվիրանների պահպանման և գործող իրավունքի նկատմամբ նրանց դրսևորած վերաբեր-

[1] Տե՛ս **Каминская В.И., Ратинов А.Р.** Правосознание как элемент правовой культуры // Правовая культура и вопросы правового воспитания. - М., 1974. - С. 12:

մունքով, որը կարող է համապատասխանել տվյալ հասարակության իրավական մշակույթի զարգացվածության աստիճանին կամ որոշակիորեն տարբերվել դրանից:

Անհատի իրավական մշակույթը, լինելով հասարակության իրավական մշակույթի բաղադրատարր, արտացոլում է անհատի իրավական զարգացման աստիճանը և բնույթը, ապահովում է նրա իրավական գործունեությունը[1]:

Իրավական դոկտրինում քննարկվող երևույթների հարաբերակցության վերաբերյալ առկա է այն մոտեցումը, որ գիտնականները «իրավական նիհիլիզմը» դիտարկում են որպես սոցիալական հարաբերությունների կարգավորման հարցում «իրավունքի» ունեցած հնարավորությունների կապակցությամբ թերահավատ վերաբերմունք[2]: Մեր ժամանակներում իրավական նիհիլիզմի մասին հարկ է համարում խոսել յուրաքանչյուր ոք, անգամ նա, ով գաղափար անգամ չունի իրավունքի և նիհիլիզմի մասին[3]: Իրավական նիհիլիզմի տարածվածությունը ակնհայտ է. այն գոյություն ունի պետական կառավարման յուրաքանչյուր ոլորտում, մարդկանց առօրյա հարաբերություններում և այլն: Իրավական նիհիլիզմի բովանդակային ասպեկտը քննարկելու պայմաններում հարկ է նաև ընդգծել, որ այն սոցիալապես վտանգավոր երևույթ է և բարեփոխումների ճանապարհին կարող է լուրջ խնդիրներ առաջացնել:

Գրեթե բոլոր իրավական պետություններում իրականացվում են հատուկ գործառույթներ տվյալ պետության տարածքում իրավունքի գերակայության

---

[1] Տ՛ես 1. **Остроумов Г.** Правовое осознание действительности. - М.: Наука, 1969. - 173 с. 2. **Аскин Я.** Проблема времени, ее философское истолкование. - М.: Мысль, 1966. - 200 с. 3. **Фарбер И.** Правосознание как форма общественного сознания. - М.: Юрид. лит., 1963. - 205 с. 4. **Грушин Б.** Массовое сознание. - М.: Политиздат, 1987. - 368 с. 5. **Туманов В.** Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе // Государство и право. - М.: Наука, 1993, № 8. - С. 52-58. 6. **Осипов Г.** Социальное мифотворчество и социальная практика. - М.: Норма, 2000. - 543 с. 7. **Спиркин А.** Сознание и самосознание. - М.: Политиздат, 1972. - 303 с. 8. **Тихонравов Ю.** Основы философии права. - М.: Вестник, 1997. - 608 с. 9. **Бегинин В.** Общественное правосознание и государственность / Под ред. В.А. Шабалина. - Сар., Изд-во Сарат. ун-та, 1993. - 130 с. 10. **Бельский К.** Формирование и развитие социалистического правосознания. - М.: Высш. шк., 1982. - 183 с. 11. **Бура Н.** Функции общественного правосознания. – Киев: Наукова Думка, 1986. - 86 с. 12. **Гранат Н.** Правосознание и правовая культура // Теория права и государства / Под ред. Н.В. Катаева и В.В. Лазарева. - Уфа, 1994. - 352 с. 13. **Щегорцев В.** Социология правосознания. - М.: Мысль, 1981. - 174 с.:

[2] Տե՛ս **Ильин И.А.** Теория права и государства. 2-е изд., доп. / Под ред. и с биограф. очерком В.А. Томсинова. - М., 2008. - С. 318 – 319:

[3] Տե՛ս **Матевосова Е.К.** Доктрина правового нигилизма // Актуальные проблемы российского права. 2014, N 6. - С. 1037-1043:

սկզբունքը ապահովելու և այն տարածելու ուղղությամբ՝ օգտագործելով առկա և հնարավոր բոլոր միջոցները, որպիսիք կարող են հանդիսանալ ուսումնական հաստատությունները, գրականությունը, եկեղեցին, հատուկ իրավաբանական ուսումնական հաստատությունները[1]: Իրավական նիհիլիզմի հաղթահարման գործընթացը երկարատև, նպատակաուղղված և բավականին բարդ աշխատանք է[2], որն իր հերթին ազդում է հասարակական կյանքի օբյեկտիվ պայմանների փոփոխության վրա: Իրավական նիհիլիզմին հակազդելու հիմնական միջոցներից մեկը պետք է լինի ընդհանուր և իրավական մշակույթի մակարդակի բարձրացման գլոբալ ձգտումը, քաղաքացիներին, բնականաբար, անհրաժեշտ է օրենսդրության արդիականացում, կարևոր է կրթական հաստատությունների դերի բարձրացման գործոնը[3], պետք է կանոնավոր աշխատանք տարվի իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ: Բնականաբար, իրավական գիտակցության զարգացումը սկսվում է բարոյական արժեքների, նորմերի յուրացումից ընտանիքում, դպրոցում, հոգևոր հաղորդակցության մեջ, ներառյալ հասակակիցների շրջանում:

Սույն ուսումնասիրության գիտական նորույթը, «իրավական մշակույթ» և «իրավագիտակցություն» եզրույթների արդի գիտական ընկալումների վերաիմաստավորման անհրաժեշտության հիմնավորմամբ, իրավական մշակույթի ձևավորման պատմաքաղաքական ու արդի նախադրյալների շրջանակի բացահայտման, իրավական մշակույթի զարգացման գերակա ուղղությունների հստակեցման, իրավունքի սկզբունքների և իրավական մշակույթի փոխազդեցության վերլուծության, միջազգային և ազգային-իրավական համակարգերի փոխհարաբերության համատեքստում իրավական մշակույթի դրսևորումների ուսումնասիրության, իրավաստեղծ, իրավակիրառ և այլ ոլորտներում իրավական մշակույթի ազդեցության բացահայտման առնչությամբ գիտականորեն հիմնավորված եզրահանգումների ներկայացումն է:

---

[1] Տե՛ս **Жидяева Е.С., Сущенко С.А., Сущенко Л.Г.** Правовое воспитание – важнейший компонент правовой социализации личности // Научный вестник ГАОУВО “Невинномысский государственный гуманитарно-технический институт”. 2016, Т. 2. - С. 91.

[2] Տե՛ս **Левентюк А.В.** Правовое воспитание как метод преодоления правового цинизма: основные направления // Общество и право. 2009, N 2. - С. 30-32.

[3] Տե՛ս **Левина С.В**. Воспитательная функция права в структуре правового образования // Юридическое образование и наука. 2014, N 1. – С. 36-44:

Գիտական հոդվածի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, գիտական, տեսական հիմնադրույթներ և ընդհանրացված առաջարկներ, որոնք հանդիսանալով գիտական նորույթ, հանգում են հետևյալին.

Հայ ազգային-իրավական մշակույթը՝ այլ իրավական մշակույթների հետ փոխհարաբերության տեսանկյունից, հանդիսանում է կիսաբաց, սակայն այս դեպքում հիմնական առանձնահատկությունը թելադրված է ոչ այնքան անցումային գործոնով, երբ սոցիալ-քաղաքական արմատական վերափոխումների պարագայում օտարածին իրավական երևույթների նկատմամբ դրսևորվում են համեմատաբար նկատելի հանդուրժողականություն և դրան զուգահեռ՝ ազգային ավանդույթներին ու մտածելակերպին առնչվող իրավական երևույթների նկատմամբ պահպանողական ձգտումներ, որքան յուրովի ընկալվող նեղ գերատեսչական և ոչ իրավաչափ այլ շահերով:

Փորձ է արվել համակարգված կերպով ներկայացնել գիտագործնական բնույթի առաջարկություններ, որոնք միտված են վերը նշված հիմնախնդրի լուծմանը և, միաժամանակ, հիմնավորված է համարվել ազգային-իրավական մշակույթը նաև հետագայում կիսաբաց բնութագրիչներով, սակայն արդեն բացառապես դեպի համամարդկային արժեքները կողմնորոշված որակով պահելու անհրաժեշտությունը:

Ազգային իրավական մշակույթն ընդհանուր առմամբ համահունչ չէ, հատկապես, զանգվածային իրավախախտումների կանխարգելման ու բացահայտման խնդիրների բարեհաջող լուծմանը: Այդ առնչությամբ պետական քաղաքականության մեջ դրսևորվում են ծայրահեղ, իրարամերժ մոտեցումներ. մի դեպքում, ըստ էության, հանրային վտանգ չներկայացնող արարքների առնչությամբ անվերապահորեն նախապատվությունը տրվում է պետական հարկադրանքին (այդ թվում՝ քրեական պատժամիջոցների կիրառմանը), մեկ այլ դեպքում՝ պարբերաբար շրջանառության մեջ դրվող տնտեսական բնույթի «համաներման» ինստիտուտին (օրինակ՝ հարկերը վճարելուց չարամտորեն խուսափողներին հաշվարկված հարկերից ու տուգանքներից ազատելը):

Իրավական մշակույթի բնույթի, մասնավորապես դրա կայունության և հուսալիության ցուցիչներից է, այսպես կոչված, սահմանագծային արարքների (խոսքն այնպիսի արարքների մասին է, որոնք թեպետ տվյալ երկրի օրենսդրությամբ չեն համարվում իրավախախտում, սակայն միջազգային

փորձը և, հատկապես, բարոյական իրավունքը դրանց նկատմամբ ունեն բացասական վերաբերմունք) առնչությամբ ձևավորված հասարակական ինքնագիտակցության բնույթը: Մասնավորապես, կարծում ենք՝ այդպիսի արարքների նկատմամբ բարոյական իրավունքի չեզոքությունը կարող է գնահատվել որպես իրավական մշակույթի խոցելիության, անկատարության ցուցիչ: Տվյալ դեպքում, ենթադրվում է, որ բարոյական նորմերի պահանջները պետք է որոշակի իմաստով գերազանցեն իրավունքի նորմերով ամրագրված պահանջները, ինչը, այսպիսով, իրավական նիհիլիզմի բնութագրիչ համարվել չի կարող:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման արդիական հարցադրումների վերաբերյալ տեսական հետազոտությունը հնարավորություն է տալիս անհրաժեշտ գիտական չափանիշներով վերահիմաստավորելու իրավական այդ երևույթների նկատմամբ պատկերացումները, առաջադրելու դրանց հետազոտության միանգամայն նոր տեսանկյունից բխող չափանիշներ ու եղանակներ: Հետազոտության արդյունքները հավասարապես կարող են օգտակար լինել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ պրակտիկ գործունեության մեջ, մասնավորապես հնարավորություն կտան այդ ոլորտներում կատարելու առավել ազդեցիկ ու կանխատեսելի շեշտադրումներ:

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության գիտագործնական նշանակությունն ընդգծվում է հետագա իրավական բարեփոխումների ուղղությունները և եղանակները որոշ չափանիշներով վերանայելու և դրանք առավել իրատեսական ու արդյունավետ դարձնելու վերաբերյալ կոնկրետ եզրահանգումների առաջադրմամբ: Որոշ եզրահանգումներ բխում են վարչարարության և դատաիրավական բարեփոխումների կոնկրետ հարցադրումներով գիտական հետազոտությունների արդյունքներից և կարող են արժեքավոր լինել այդ համակարգերի գործունեության արդյունավետությունը գնահատելու հարցադրումներով մշտադիտարկումներ (մոնիտորինգներ) իրականացնելու համար համապատասխան մեթոդական ցուցումներ պատրաստելու և կիրառելու տեսանկյունից:

Ուսումնասիրության գիտագործնական նշանակությունը փոխպայմանավորված է նաև ինքնուրույն ազգային-իրավական համակարգի ձևավորման ու դրա՝ բացառապես մեր երկրի առանձնահատկություններին և արդեն իսկ

ձևավորված իրավական համակարգին համահունչ իրավական ինստիտուտներով ու իրավական լուծումներով հարստացման անհրաժեշտությամբ:

Կարծում ենք՝ հոդվածում արտացոլված առանձին տեսակետներ կարող են պիտանի լինել օրենսդիր իշխանության, վարչարարության, դատական համակարգի, դատական տարբեր ատյանների դատավարությունների վերանայման, դրանց բարելավման, խնդիրների գիտագործնական քննարկումների շրջանակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Алексеев С.** Общая теория права. В 2-х т., Т. 1. - М.: Юрид. лит., 1981.
2. **Щегорцев В.** Социология правосознания. - М.: Мысль, 1981.
3. **Ильин И.А** Собрание сочинений. - М., 1993.
4. **Остроумов Г.** Правовое осознание действительности. - М.: Наука, 1969.
5. **Рослов С.** Роль правосознания в формировании гражданского общества в России: диссертация на соискание ученой степени кандидата социологических наук. - Сар., 2005.
6. **Малахов В.А.** Культура и человеческая целостность. - Киев, 1984.
7. **Каминская В.И. Ратинов А.Р.** Правосознание как элемент правовой культуры // Правовая культура и вопросы правового воспитания.
8. **Остроумов Г.** Правовое осознание действительности. - М.: Наука, 1969. - 173 с.
9. **Аскин Я.** Проблема времени, ее философское истолкование. - М.: Мысль, 1966 - 200 с.
10. **Фарбер И.** Правосознание как форма общественного сознания. - М.: Юрид. лит., 1963. - 205 с.
11. **Грушин Б.** Массовое сознание. - М.: Политиздат, 1987. - 368 с.
12. **Туманов В.** Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе // Государство и право. - М.: Наука, 1993, № 8. - С. 52-58.
13. **Осипов Г.** Социальное мифотворчество и социальная практика. - М.: Норма, 2000. - 543 с.

14. **Спиркин А.** Сознание и самосознание. - М.: Политиздат, 1972. - 303 с.

15. **Тихонравов Ю.** Основы философии права. - М.: Вестник, 1997. - 608 с.

16. **Бегинин В.** Общественное правосознание и государственность / Под ред. В.А. Шабалина. - Сар.: Изд-во Сарат. ун-та, 1993. - 130 с.

17. **Бельский К.** Формирование и развитие социалистического правосознания. - М.: Высш. шк., 1982. - 183 с.

18. **Бура Н.** Функции общественного правосознания. – Киев: Наукова Думка, 1986. - 86 с.

19. **Гранат Н.** Правосознание и правовая культура // Теория права и государства / Под ред. Н.В. Катаева и В.В. Лазарева. - Уфа, 1994. - 352 с.

20. **Щегорцев В.** Социология правосознания. - М.: Мысль, 1981. - 174 с.

21. **Ильин И.А.** Теория права и государства. 2-е изд., доп. / Под ред. и с биограф. очерком В.А. Томсинова. - М., 2008.

22. **Матевосова Е.К.** Доктрина правового нигилизма // Актуальные проблемы российского права. 2014, N 6.

23. **Жидяева Е.С., Сущенко С.А., Сущенко Л.Г.** Правовое воспитание – важнейший компонент правовой социализации личности // Научный вестник ГАОУВО “Невинномысский государственный гуманитарно-технический институт”. 2016, Т. 2.

24. **Левентюк А.В.** Правовое воспитание как метод преодоления правового цинизма: основные направления // Общество и право. 2009, N 2.

25. **Левина С.В.** Воспитательная функция права в структуре правового образования // Юридическое образование и наука. 2014, N 1.

РАЗВИТИЕ ПРАВОСОЗНАНИЯ И ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ КАК СРЕДСТВО ПРЕОДОЛЕНИЯ ПРАВОВОГО НИГИЛИЗМА

Аннотация

Актуальность исследования заключается в том, что определение правосознания как субъективного фактора, определяющего действия индивидов в государственно-правовой сфере, дает основу для понимания

природы этих социальных отношений, что приводит к постоянному интересу к изучаемой теме. В статье рассматриваются проблемы понимания сущности правосознания и правовой культуры граждан в контексте мнений, высказанных различными учеными-юристами в области теории государства и права. Кроме того, автор анализирует основные причины и условия, способствующие возникновению правового нигилизма у граждан. В результате исследования делается вывод о том, что правовое самосознание личности и правовая культура общества в целом оказывают существенное влияние на правовое регулирование общественных отношений. В связи с этим перед государством поставлена задача всеми возможными способами способствовать поэтапному повышению уровня правосознания посредством внедрения организованных знаний о праве, а также повышения общей правовой культуры населения.

Ключевые слова: правовая культура, правосознание, правовое отрицание (нигилизм), юридическая ценностность, юридическое воспитание, общественное сознание.

DEVELOPMENT OF LEGAL AWARENESS AND LEGAL CULTURE AS A MEANS OF OVERCOMING LEGAL NIHILISM

Annotation

The relevance of the research lies in the fact that the definition of legal awareness as a subjective factor determining the actions of individuals in the public law sphere provides the basis for understanding the nature of these social relations, which leads to a constant interest in the topic under study. The article examines the problems of understanding the essence of the legal consciousness and legal culture of citizens in the context of the opinions expressed by various legal scholars in the field of the theory of state and law. In addition, the author analyzes the main causes and conditions that contribute to the emergence of legal nihilism among citizens. As a result of the study, it is concluded that the legal self-awareness of an individual and the legal culture of society as a whole have a significant impact on the legal regulation of public relations. In this regard, the state has been tasked with contributing in all possible ways to a gradual increase in the level of legal

awareness through the introduction of organized knowledge of law, as well as improving the general legal culture of the population.
Keywords: legal culture, legal awareness, legal denial (nihilism), legal value, legal education, public consciousness.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.05.2025 թ., գրվել է գրախոսության 02.06.2025 թ., ընդունվել է տպագրության 12.06.2025 թ.: